ԱՐՏՈՆ ՔԱՀԱՆԱ ԱՇՃՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆՑ, ԱՌԱՋՆՈՐԴ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ (1938-1944)

Այս տողերը գրի առնողը երբ Սուրիայեն եկավ Նյու-Յորք 1947-ին, ավելի քան երկու տարիե ի վեր Հյուսիսային Ամերիկայեն դեպի Լիբանան մեկնած էր երջանկահիշատակ Տ. Տ. Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանց. Մեծի Տանն Կիլիկիո արժանընտիր Հայրապետը։ Ամերիկահայոց աչքեն այլևս հեռու, սակայն անոնց սրտերուն մեջ հարազատորեն մոտ էր այդ օրերուն և կմնա միշտ մոտ Վեհափառը, նախկին Գարեգին Սրբազանը, որ 1936-են 1944, ավելի քան ութ տարի, Իր հմայքով և հիանալի կորովով անջնջելի գրոշմ թողած էր Ամերիկայի հայոց ազգային-եկեղեցական կյանքին վրա։

Կհիշեմ Վեհափառը Հայրապետական նվիրակի Իր հանդամանքին մեջ, 1935-ի աշնան Երուսաղեմ անցուցած Իր շրջանեն։ Արարատը, Ս. Էջմիածինը, Հայաստանի խաչքարերն ու այլ հնագիտական գեղարվեստական բեկորները մոդական լապտերով ցուցադրված Իր հնամենի, սակայն թանկարժեք լուսանկարներով մեզի՝ պատանի ժառանգավորներուս համար առաջին անգամն էր, որ կդառնային կենդանի իրականություն, մթնցած հանդիսասրահին մեջ բերելով հուզում մեր սրտերուն և արցունք մեր աչքերն ի վար, անրացատրելի հայրենաբաղձության մը իբր նշան «Ողջույն եմ բերել ձեզ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից»,— ըսած էր Նվիրակ Գարեգին Սրբազանը Սրբոց Հակոբյանց Մայր Տաճարի մեջ խոնված զինք դիմավորող բազմության, Իր համբուրելի արևելահայերենով և ջերմ ու անկեղծ արտահայտությամբ։ Եվ այդ ողջույնը այժմ միս ու ոսկոր կդառնար, Իր պարզ և սակայն, հայրենասիրությամբ տոգորուն բառերով, Իր պատկերազարդ դասախոսություններով. հայկական գեղարվեստի հուշարձաններուն հանդեպ Իր ստեղծած հետաքրքրությամբ և պաշտանքի հասնող հիացումով։ «Էլի սրա գծերը...» Իր բերնին մեջ վավերանիշն էին հայ արվեստի գլուխ-գործոցի մը, որուն մանրամասնությունները իմաստ ու կյանք կստանային սրբազանի ցուցաքանակին ներքև։

Կհիշեմ Վեհափառը այդ օրերեն տասնամյակ մը ետք, Հալեպի մեջ, երբ իբր նոր սծյալ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո, Իր անդրանիկ հովվապետական այցելությունը կատար ինքնաշարժ կառքերու թափորով մը, Հալեպի բազմահազար հայ համայնքին։ Իբրև ուսուցիչ հայ նախակրթարանի մը մեջ, ես ալ կետ մըն էի մդոններով երկարող շարքերու մեջ, որոնք կազմված էին հազարավոր հայ գպրոցական մանուկներե, ուսուցիչներե, արիներե և արեղուշներե, խուռն հայ և արաբ բազմություններե, որոնք ժամերով կսպասեին Վեհափառ Կաթողիկոսի գալուն։ Արևամուտը մոտ էր, երբ երևաց Անոր համեստ այլ ուղիղ հասակը բաց կառքի մը մեջ կանգուն, զարդարված ալեփառ և աղուծակերպ գլուխով, երբ բազուկը կարկառած խանդավառ ճոճումներով, 78-ամյա երիտասարդաշունչ Հայրապետը, Անթիլիասեն Հյուսիսային Սուրիա հոդնեցուցիչ և երկարատև ընդմիջումներով լի Իր ճամբորդության հակառակ, կորովի և համոզկեր պերճախոսությամբ, Իր հովվապետական պատգամը կբերեր լույսի և հույսի ձարափի հալեպահայության։

Ամերիկայի հայությունը մոայլ օրերու մեջ դիմավորած էր Հայրապետական լիազոր պատվիրակը՝ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանցը՝ Նյու-Յորք։ Թարմ էր այդ օրերուն պատկերը հայ մարդասպանի ձեռքով

նահատակյալ նախորդ առաջնորդ Տ. Ղևոնդ արքեպիսկոպոս Դուրյանի արնաթաթախ ու պատառոյլ քահանայական զգեստներուն։ Ամերիկայի հայության մեկ փոքրամասնությունը գլուխ ցցած էր Մայր Աթոռի հեղինակության դեմ։ Նվազ չէր ատելության, վրեժխնդրության կիրքը շատերու հոգիին մեջ։ Եկած էր հաշտարարը՝ Իր տարիքով, գիտությամբ, մատենագրական և առաջնորդական արդյունքներով պատկառելի, հայրենասիրությամբ աներկրայելի, և անձնական հմայքով սիրելի Գարեգին Սրբազանը։ Հաշտությունը սակայն կախում չունի լոկ հաշտարար միջնորդեն։ Կռվի բռնվողները պետք է ունենան կամք հաշտվելու։ Բացակա էր այդ կամքը ամերիկահայոց մեջ 1930-ական այդ թվականներուն մանավանդ։

Այսուհանդերձ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը եկած էր ցանելու սերմեր, որոնք տասնամյակներու ընթացքին կոչված էին ծելու և բերուն դառնալու ամերիկահայոց կյանքին մեջ։ 1936-են 1938 երկամյակը առիթ եղավ Նվիրակ սրբազանին՝ ճանչնալու Ամերիկայի հայությունը և նախազգալու անոր ապագա կարիքները։ Թեմին առաջնորդ ընտրվելեն և պաշտոնի ձեռնարկելեն անմիջապես ետք, Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը՝

ա. Հաստատեց Ամերիկայի հայոց առաջնորդարանի պաշտոնաթերթ «Հայաստանյայց Եկեղեցի» ամսագիրը, ժամանակ հատկացնելով հոդվածագրության։

բ. Բարձրացուց առաջնորդարանի վարկն ու հեղինակությունը, վերակազմելով Ազգային Կեդրոնական Վարչության ենթակա մարմինները և հետզհետե բառնալով Առաջնորդարանի տարիներու ընթացքին դիզված պարտքը։

գ. Առաջնորդարանի օժանդակ միությունը վերածեց հայ մշակույթը պանծացնող և հասարակության մատչելի դարձնող մնայուն կազմակերպության մը, որուն շնորհիվ ամեն հոկտեմբերի կտոնվի Հայ մշակույթի օրը, կկազմակերպվին խնամյալ պատրաստությամբ համերգ, նվագահանդես կամ թատերական ներկայացում Նյու-Յորքի մեջ, ապահովելով նույն ատեն այքառու եկամուտ մը առաջնորդարանի բյուդջեին ի նպաստ։

դ. Նյու-Յորքի մեջ Մայր եկեղեցի և Մշակութային կեդրոն մը կառուցանելու տեսիլը հղացավ, միաժամանակ շեշտելով կարիքը եկեղեցական և ուսուցիչ պատրաստող հայկական ճեմարանի մը Ամերիկայի մեջ, և նախատեսելով Ամերիկայի հայոց եկեղեցական զարգացումը, ըրավ թելադրություններ թեմական շրջանակներ հաստատելու մասին։

ե. Օծեց նորաստաց եկեղեցիներ, քաջալերեց անոնց բարեգործումը, խնդակից եղավ Իր հոտին զանազան ծուխերու պարտամուրհակներու այրումի հանդիսությանց նախագահելով։

զ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նյութական օժանդակություն ապահովեց, ծուխերու վրա «Լուսավորչի լումա»-ի մնայուն տուրք հաստատելով։

է. Հիտլերի շղթայազերծած պատերազմի ընդդիմացող ռուսական բանակին «Սասունցի Դավիթ» հրասայլերու հայկական զորասյուն մը նվիրելու կոչին բերավ Իր գործոն մասնակցությունը, նախագահելով և առնախոսելով հանգանակության հավաքույթներուն, որոնց շնորհիվ գոյացավ 85 000 դոլարի գումար մը։

Զարմանալի չէ հետևաբար այն պարծանքը, որով շատ մը ամերիկահայեր կհիշեն երջանկահիշատակ Գարեգին արքեպիսկոպոսի առաջնորդական շրջանին իրենց հանդիպումներն ու հաստատած կապերը այս պատկառելի մարդուն հետ։ Անոր հետ սեղանակցությունն, իրենց ընտանեկան հարկին տակ Անոր ընծայված ասպնջականությունն և մեծարանքը, Անոր կողմե մակագրված պաշտոնական լուսանկար մը թե ընկերական մտերմիկ հավաքույթի մը առթիվ քաշված փոքր անպաշտոն նկարներ, սրամիտ կատակի փշուր մը, միևնույն կառքով ուղեկցելու դրվագ մը, այս բոլորը կպահվին արդար հպարտությամբ և գուրգուրանքով, և կմնան անմրցելի, բացառությամբը այն հիշատակներուն, զորս 1960-ին մեր ներկա Հայրապետը՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց ընծայեց Հյուսիսային Ամերիկայի հայության՝ Իր օրհնաբեր այցելությամբ։

Երջանկահիշատակ Գարեգին Կաթողիկոսի վախճանման տասնամյակի այս հանգրվանին, Ամերիկայի Միացյալ Նահանգներու եբրախտապարտ հայությունը եթե չի կրնար ուխտի երթալ Անոր հեռավոր գերեզմանին, գեթ նայելով իր շուրջ ու տեսնելով հասակ ու մարմին առնելը լուսահոգի Վեհափառին մեկե ավելի տեսիլքներուն՝ Մշակութային կեդրոնի և Մայր Տաճարի մոտալուտ կառուցումովը և Ս. Ներսես Շնորհալի Աստվածաբանական ճեմարանի բացումովը, կօրհնե Անոր լուսապայծառ հիշատակը և ափ մը խունկ կծխե Անոր հոգվույն համար, երգելով ու մաղթելով

«Խաւար մերոյ, արամեալ հոգիքն ուրախանան»։